Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) հայտարարում է Մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Վաղարշապատի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 63-4.3-19)

Կատարում է տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների /ընտանիքների/ սոցիալական և նյութական պայմանները: Ապահովում է իր սպասարկման տարածքում բնակվող անձանց՝ սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ պետական նպաստների տրամադրելը, ինչպես նաև տեղեկատվական բազայում ընտանիքների, քաղաքացիների մասին ամրագրված տվյալների նույնականությունը, նպաստի գործում առկա փաստաթղթերում ներառված տվյալների հետ: Տալիս է առաջարկություն տվյալ ընտանիքին աջակցություն տրամադրելու հարցը սոցիալական աջակցության խորհրդի քննարկմանը ներկայացնելու համար, ինչպես նաև իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի.սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն. անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն. անհրաժեշտ /պարտադիր/ կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում /Ցանկեր N 1, N 2/:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ (ք. Արմավիր, Աբովյան 71) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս), կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները), աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում), քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը, արական սեռի

անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք, մեկ լուսանկար՝ 3Х4 սմ չափսի, անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 23 հունվարի 2013 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել Մարզպետարանի աշխատակազմ (ք.Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237/ 2-42-62):